# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-17/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝** Մ. Թումանյան

**Հանձնաժողովի անդամներ՝** Ք. Թադևոսյան, Ա. Գևորգյան, Ձ. Խաչատրյան, Լ. Լևոնյան

**Հանձնաժողովի քարտուղար՝** Մ. Զալինյան

## 1. Սխալ գնահատման վերաբերյալ

**1.1. Հայտերի բացման.**

- **վայրը՝** Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ
- **օրը՝** 7 նոյեմբերի 2016թ.
- **ժամը՝** 09:30

**1.2.** Ընդունել ի գիտություն, որ 02.11.2016թ–ին տեղի է ունեցել հայտերի բացման նիստ: Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է ներկայացված բոլոր մասնակիցների փաստաթղթերը, որի ժամանակ **«Գարդմեն» ՍՊԸ**–ի և **«Դավիթ–84» ՓԲԸ**-ի հայտերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պայմանների նկատմամբ և նիստը կասեցվել է: 03.11.2016թ-ին ոչ ավտոմատ ծանուցմամբ վերոհիշյալ կազմակերպություններին ուղարկվել են անհամապատասխանությունները շտկելու ծանուցումներ, որոնք մասնակիցների կողմից շտկվել են:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

**1.3.** Մեկ անգամ ևս ուսումնասիրելով **«Դեագա» ՍՊԸ**–ի հայտը հանձնաժողովը արձանագրել է, որ թյուրիմացություն է տեղի ունեցել, որի ժամանակ մերժվել է «Դեագա» ՍՊԸ–ի հայտը: Գնահատող հանձնաժողովը որոշեց չեղյալ համարել 02.11.2016թ-ի գնահատող հանձնաժողովի N2 Արձանագրության 1.4 կետի 3-րդ պարբերությամբ կայացրած որոշումը: Որոշում կայացվեց **չմերժել** «Դեագա» ՍՊԸ–ի հայտը: Այդուհանդերձ «Դեագա» ՍՊԸ–ի հայտում, մասնավորապես Հավելված 1-ում արձանագրվել է անհամապատասխանություն հրավերով սահմանված պահանջների համապատասխան, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված հավելված 1-ի 3-րդ կետով նշված չէ 5-րդ չափաբաժինը որ երկրի արտադրության ապրանք է հանդիսանում:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

**1.4.** Գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 45-րդ կետի դրույթով, «Դեազա» ՍՊԸ–ի հայտում արձանագրված անհամապատասխանությունը որակել «անհամապատասխանություն ոչ գնային պայմանների մասով» և Մատակարարին տրվեց 1 օր ժամանակ (մասնակցին ծանուցելու պահից հաշված) այն շտկելու համար՝ կասեցնելով գնահատման նիստը:
Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Մ. Թումանյան |
| Անդամներ՝ | | Զ. Թադևոսյան |
| | | Ա. Գևորգյան |
| | | Զ. Խաչատրյան |
| | | Լ. Լևոնյան |
| Համակարգող՝ | | [illegible] |